Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

Ձեր 2020թ. մարդահամարի տեղեկությունները պաշտպանված են

2020թ. մարդահամարի համար U.S. Մարդահամարի բյուրոն առաջարկում է առցանց լրացնել հարցաշարը: Հոգ չէ, հարցաշարը լրացնում եք առցանց, թե թղթային դիմումի ձևով, ձեր անձնական տեղեկությունների պաշտպանությունը շատ կարևոր է:

Օրենքով ձեր անձնական տեղեկությունները չեն կարող ձեր դեմ օգտագործվել և U.S. Մարդահամարի բյուրոն անվտանգության միջոցառումներ է ձեռնարկել՝ երաշխավորելու գործընթացի անվտանգությունը և ընթացքի ցանկացած քայլը:

Գաղտնիություն

U.S. օրենսգրքի 13-րդ հոդված
U.S. օրենսգրքի 13-րդ հոդվածն արգելու մ է Մարդահամարի բյու րոյին տարածել ճանաչելի տեղեկություններ, որոնք դուք որևէ պատճառով հայտնել եք ցանկացած այլ կառավարական գործակալության կամ պաշտոնյայի (այդ թվում՝ ներգաղթի հարցերով զբաղվող պաշտոնյաների կամ որևէ իրավապահ գործակալության), արտաքին կազմակերպության կամ դատարանի:

Մարդահամարի երդում
U.S. Մարդահամարի բյուրոյի յուրաքանչյուր աշխատակից ցմահ երդում է տալիս պաշտպանել ձեր անձնական նույնականացումը և նրան չի թույլատրվում որևէ պատճառով ձեր դեմ օգտագործել ձեր իսկ տրամադրած տեղեկությունը: Օրենքի խախտումները կարող են պատժվել դաշնային բանտում մինչև հինգը տարի ազատազրկմամբ, 250,000 դոլարի տուգանքով կամ երկուսով միասին:

Կիբերանվտանգության պաշտպանությունը

Կիբերանվտանգու թյան մակարդակի բարձրացման մասին դաշնային ակտ Կիբերանվտանգու թյան մակարդակի բարձրացման մասին 2015 թվականի դաշնային ակտը երաշխավորում է ձեր տվյալների պաշտպանությունը կիբերանվտանգության արտաքին վտանգներից: Ձեր անունը, հասցեն և հեռախոսահամարը երբևէ չեն բացահայտվի կամ հրապարակվի:

Մարդահամարի գործողությունների կենտրոններ
Եթե հարցաշարին առցանց պատասխանելու դեպքում օգնության կարիք ունեք, այցելեք census.lacity.org, որպեսզի գտնեք ձեր մոտակայքում առկա Մարդահամարի գործողությունների կենտրոնը:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:
Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org
#2020Census